ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА
CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ՈՒԱԿ NCO

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76
ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76
76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 670
«28» 06 2024

Հեռ. (+374 10) 20-94-02

Որոշում N ՈՒԱԿ- ԷԱՃԱՊՁԲ-24/76

«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 06.06.2024 թվականին հայտարարված «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/76» ծածկագրով դռների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ. դիմում հայտարարությունը /հավելված 1/ չի համապատասխանել հրավերի պահանջներին, հայտում բացակայել են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը /հավելված 1.3/, ինչպես նաև ապրանքի ամբողջական նկարագիրը, գնման առարկայի մոդելը, ֆիրմային անվանումը և արտադրողը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 19.06.2024 թվականին ծանուցվել էր Մասնակցին հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով՝ Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 21.06.2024 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելով խախտել է գնման ընթացակարգով ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը, որոշում եմ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ. /010/ 20 50 50 /102/